**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ**
**ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ**

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, Էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

*թիվ 315-15*
*15 հոկտեմբերի 2015թ.*

*ՀՀ Լոռու մարզպետ*
*Պարոն Ա. Նալբանդյանին*

Ձեզ ենք ներկայացնում Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N 33-Ա, N 34-Ա և 35-Ա որոշումները:

Առդիր՝ երեք թերթ:

***Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիտանյան***

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-56

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2015 թվական, N 33-Ա**

**ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, $12^{1}$-րդ և 14-րդ հոդվածների՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 14-ի տասնմեկերորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Կողմ (6)** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2015թ., հոկտեմբերի 14, ժ. 11:00**
**Գ. Օձուն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2015 թվական, N 34-Ա

## ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի, 69-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին երրորդ եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ (6) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ա. ԱՂԻԿՅԱՆ | | |
| Ս. ԱՍՐՅԱՆ | | |
| Ա. ԲԵԺԱՆՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | | |
| Ս. ՏԻՏԱՆՅԱՆ | | |

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., հոկտեմբերի 14
Գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2015 թվական, N 35-Ա**

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. հիմք ընդունելով Օձուն համայնքի բնակիչների դիմումները և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը, Օձուն համայնքի ներքոնշյալ բնակիչների նկատմամբ սահմանել գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություններ հետևյալ չափերով.

1) Գառնիկ Պատվականի Շախկուլյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 22, տուն 24, ՀՎՀՀ 13572127) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2008-2015 թվականների գույքահարկի ապառքներից՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 2008-2015 թվականների գույքահարկի տույժից՝ 27 741 (քսանյոթ հազար յոթ հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ գումարի չափով.

2) Սարգիս Վաղինակի Այվազյան (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 12, տուն 29, ՀՎՀՀ 13596227) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2015 թվականի գույքահարկի ապառքից՝ 19 500 (տասնինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2012-2014 թվականների գույքահարկի տույժից՝ 31 804 (երեսունմեկ հազար ութ հարյուր չորս) ՀՀ դրամ գումարի չափով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| **Կողմ (6)** | **Դեմ ( չկա )** | **Ձեռնպահ ( չկա )** |
|---|---|---|
| Ա. ԱՂԻԿՅԱՆ | | |
| Ս. ԱՍՐՅԱՆ | | |
| Ա. ԲԵԺԱՆՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | | |
| Ս. ՏԻՏԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2015թ., հոկտեմբերի 14**
**Գ. Օձուն**